«Ազատամարտիկ»-ը նոյեմբերի տասին Ռազմիկ Վասիլյանի մարտական և գաղափարական ընկերների հետ ԵՌԱԲԼՈՒՐՈՒՄ էր, ապա փառքի բաժակը պարզեց առ հավերժություն՝ հանու՛ն Ռազմիկ Վասիլյանի, հանու՛ն

ԵՌԱԲԼՈՒՐԻ ՀԱՅՈՑ ՏԵՐԵՐԻ...

Նվիրում եմ «Հայոց Ազգային բանակ» ռազմական կազմակերպության գլխավոր հրամանատար՝ Ռազմիկ Արսենի Վասիլյանի ծննդյան 45 ամյակին

Ծնվել է 1960թ. նոյեմբերի 10-ին՝ Երևանում: Սովորել և ավարտել է թիվ 117միջ. դպրոցը: Այնուհետև Երևանի քիմիա-տեխնոլոգիական տեխնիկումը: Ուսումը շարունակել է Մոսկվայի ֆինանսատնտեսագիտական ինստիտուտում...
Ցեղակրոն արորդին ոտքի էր, իր ժողովրդի կողքին: Նա այն առաջիններից էր, որ զենքի կոչեց Հայ Ազգին և ամբողջ կյանքում ապրեց, որպես հայ ազգի երդվյալ ռազմիկ:

- Ես իմ Ազգի ռազմիկն եմ:

Այսօր նա կրկին իր ազգի հետ է: Երդվյալները երբե՛ք չեն հեռանում և չե՛ն մոռացվում: Նրանք մեզ հետ են, մեր մեջ, մեր կողքին՝ խաչվելով հավերժությանը:

- Ես հավերժ եմ, ես երբե՛ք չեմ մահանա: Ես կմահանամ լոկ այն ժամանակ, երբ ազգս կործանվի: Ուրիշ մահ չկա ինձ՝ Վասիլյանիս:

Ռազմիկ Վասիլյան, դու քո հոգում ամփոփում ես հայ ազգը: Ամփոփում ես ազգիս վրիժառության ոգին, պատվախնդրությունն ու հպարտությունը: Դու մի սուրբ լեռ ես խորհրդանշում – քո հոգում ծածանելով ՀԱՅՈՑ ԴՐՈՇԸ: Ինչպե՞ս կարող է քեզ նման հայորդին հաղթանակ չտոնել, սուտ կլինի: Չէ որ քո հոգին է ծնում հաղթանակ, իսկ հայորդու հեգին հղի է վրիժառության ոգով, որը պատվով ու հաղթանակով է ագուցվելու:

- Հայ Ազգին քաջ է պետք... Հայ ազգին մտավորականների բռունցք է պետք, որ «անարյուն հեղափոխություն լինի» և բազում հաղթանակներ:
- Ռազմի՛կ, վախեցած շշնջում էին, որ գժվել ես...
- Այո՛, Կարինե ջան, խելագար եմ դարձել, որ վատ մարդ չդառնամ:

ՀԱԲ-ի հրամանատարին ներկայացնելու համար անհրաժեշտ է և՛ հասկանալ նրան, և՛ տեսել, և՛ լսել... և՛ ճանաչել նրա էությունը: Էությունը մի մարդու, որը և՛ պարզ է, և՛ բարդ, և՛ այստեղ է, և՛ ամենուր...

- Մենք պետք է աշխարհին հրամայենք մեր գաղափարախոսությունը, մենք պետք է մեր գաղափարների ծառան լինենք, թե չէ օտար ազգերից ենք խորհուրդ հարցնում, ինչու՞, չհասկացա՞... Մեր խելքը մեր գլխից թռե՞լ է...
- Դա թուլություն է:
- Դա Հայ Ազգին վայել չէ:
- Գինին է վայել:
- Որտե՞ղ:
- Ախթամարու՛մ:
- Ծովից –Ծով Հայաստանի կենացն արի խմենք...

Ռազմիկ Վասիլյանի ձեռագրից

Ծագեցիր ինչպես արև-
Ճեղքելով հագուս մութ գիշերը.
Բայց ուշ աշուն է արդեն-
Քնել է սրտիս արևը:
Քեզ շատ եմ սպասել, ի՛մ արև,
Տեսել եմ, սակայն չեմ ջերմացել.
Դու՛, իմ աշնան թույլ արև-
Չես կարող ինձ հագեցնել:

ՀԱԲ առանց քեզ երկիրն ի՞նչ է,
Նույնն է, թե ծովը անափ,
Չորը՝ առանց քարափի,
Հայաստանն առանց Արարատ:
ՀԱԲ-ն է, որ պետք է փրկի-
Բանտված Հայոց հողերը,
Պիտ հասնի Մասիս ու Վան,
Մուշ ու Սասուն հողերը:
Իմ սիրելի ժողովուրդ.
Բռունցքվի՛ր դու, որ տիրես.
Չորքդ Արևն է երկրիդ,
Խորհրդանիշն Հայ ազգի:

Որտեղի՞ց- ու՞ր ենք գնում...
Ո՞վ գիտե - մի բուռ հայություն,
Ինչի՞ հասանք, ի՞նչ ենք ուզում.
Թղթին մատուցված անկախություն:
Մի՞թե ոչ մեկը չի հասկանում,
Որ վախ կա, էլ ի՞նչ անկախություն.
Հազարամյակներից եկել է մեկ հավասարում,
Թե կա՝ ծայրահեղություն, ապա կա՝ անկախություն:
Հային թելադրում են պահպանողականություն
Եվ ամենուր բռնաբարում են ու մորթում.
Չեմ հասկանում, ինչու՞ և ումի՞ց ենք այսօր-
Արցախը խնդրում, որպես ողորմություն:
Ա~խ, ժողովրդական դարավոր կուրություն.
Արյունոտ ձեռքերին ծաղկեփունջ ես մեկնում.
Ժողովրդավարությու~ն, ի՞նչ շքեղություն,
Որ հային «դեմոկրատիայով» ես փրկում:
Ցեղակրոնությունն է Ազգիս փրկությունը,
Թե կա Նժդեհ, էլ ի՞նչ «անմտություն»: